# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ամուրա ՍՊԸ-ն ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Աշխարհագրության լաբորատորիայի համար պարագաներ | «Ամուրա» ՍՊԸ | Աշխարհագրության լաբորատորիայի համար պարագաներ | «Ամուրա» ՍՊԸ | Թեմատիկ նկարների և անիմացիոն էսքիզների ուսուցողական օրինակների ցուցադրություն հայերեն լեզվով, համապատասխան գունավորմամբ, USB ֆլեշ կրիչով (թեմատիկ նկարները JPG ձևաչափով)։ • Միևնույն նկարի վրա տրվում են գլանային, կոնային, ազիմուտային, բազմակող պրոյեկցիաները։ • Արեգակնային համակարգը տրվում է մեկ անիմացիոն էսքիզի վրա, պահպանելով մոլորակների մեծությունների տարբերությունները։• Երկրագնդի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կառուցվածքը տրվում է մեկ նկարի վրա, առանձնացվում են աշխարհագրական թաղանթի ոլորտները՝ քարոլորտը, ջրոլորտը, մթնոլորտը և կենսոլորտը, ինչպես նաև միևնույն սխեմայում գունային երանգավորմամբ տարանջատվում՝ քարոլորտի և մթնոլորտի կառուցվածքը, տերմիններով նշվում են ոլորտներն ու ենթոլորտները, մետրերով՝ դրանց շերտերի հզորությունը: • Քամիների տեսակների (պասսատներ, մուսսոններ, բրիզներ, լեռնահովտային քամիներ, ցիկլոններ) առաջացման սխեմաներն առանձին տրվում են տարբեր անիմացիոն էսքիզների վրա:• Լանջային պրոցեսները (սողանք, քարաթափվածք, փլուզում, սոլիֆլյուկցիա) տրվում են տարբեր անիմացիոն էսքիզների վրա: • Հրաբխի անիմացիոն էսքիզի երկայնակի կտրվածքում պետք է գունային առանձնացմամբ երևան մագման, լավան, մղանցքը, խառնարանը, լավայի և մոխրի շերտերը, կողային խառնարանները: • Երկրակեղևի կառուցվածքի նկարի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | երկայնակի կտրվածքում պետք է գունային առանձնացմամբ երևան օվկիանոսային ու ցամաքային կեղևների շերտերը` միջնապատյանը, բազալտե, գրանիտե և նստվածքային շերտերը:• Ռելիեֆի տիպերի նկարը պետք է արտահայտի լեռը, հարթավայրը, հովիտն ու ջրագրությունը գունային համապատասխան երանգավորմամբ:ՀՀ միներալների նմուշները (մոլիբդենիտ, պղնձի հանքաքար (խալկոպիրիտ), կապար (գալենիտ), քվարց, պիրիտ, ծծումբ (ծծմբի հանքաքար), քարաղ, գիպս, բազալտ, անդեզիտ, գրանիտ, օբսիդիան, պեմզա, տուֆ, տրավերտին, ֆելզիտ, կրաքար, մարմար, դոլոմիտ, մետամորֆային թերթաքար, բարիտ, դիատոմիտ, նռնաքար, պեռլիտ, ագաթ) ցուցադրելու համար անհրաժեշտ է պատի ցուցափեղկ 6 մմ (±1 մմ) հաստությամբ կարծրացված կամ օրգանական ապակուց, չափը` 750 x 250 x 900 մմ, որը պետք է ունենա 5 հորիզոնական և 5 ուղղահայաց բաժանում: Ցուցափեղկը պետք է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ունենա փայտյա (լաքապատ) և մետաղական (մոխրագույն) հենարան: Հավաքածուի նմուշների չափերը` 50 x 120 x 120 մմ (± 5 մմ), բացառությամբ ագաթից: Յուրաքանչյուր նմուշ պետք է ունենա թվանշում: Նմուշների դիմաց` ցուցափեղկի դիմերեսին պետք է գրված լինի դրա թվանիշն ու անվանումը հայերեն լեզվով: Հավաքածուի նմուշների ճակատային մասը և այն հատվածը որով տեղակայվելու է ցուցափեղկի վրա պետք է հարթեցված կամ հղկված լինի, իսկ մնացած մասերով պետք է պահպանի բնական տեսքը (նմուշը չպետք է լինի բոլոր կողմերով հարթեցված, հղկված ուղանկյունանիստ): Միներալներից ագաթը ներկայացնել 50 x 120 x 120 մմ-անոց բենտոնիտային կավի բրիկետով, որի մեջ տեղադրված լինի 4 սմ տրամագծից մեծ չափերով ագաթ և բնական, և հարթեցված տեսքով: ՀՀ միներալների նմուշների հավաքածուն պետք է ամրացնել աշխարհագրության լաբորատորիայի պատին` աշակերտներին տեսանելի |

հատվածում: ՀՀ հողերի նմուշները (լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, անտառային գորշ, անտառային դարչնագույն, սևահող, շագանակագույն, կիսաանապատային գորշ, աղուտ-ալկալի) ցուցադրելու համար անհրաժեշտ են գլանաձև` 85 մմ (± 5 մմ) տրամագծով, 200 մմ բարձրությամբ, 3 մմ (± 1 մմ) հաստությամբ, փակ բերանով, թափանցիկ ամբողջական անոթներ (ապակուց կամ պլաստմասսայից)և դրանք պատի վրա տեղակայելու լաքապատ փայտյա ստենդ: Ստենդը պետք է ունենա կախիչներ և մետաղական (մոխրագույն) հենարան: Անոթների վրա պետք է հայերեն լեզվով գրված լինեն հողերի անվանումները: Անոթները պետք է լինեն ոչ գունավոր, որպեսզի հստակ արտահայտվի հողի գույնն ու կառուցվածքը: ՀՀ հողերի նմուշների հավաքածուն պետք է ամրացնել աշխարհագրության լաբորատորիայի պատին` աշակերտներին տեսանելի հատվածում:ՀՀ հողերի նմուշները

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Амура ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | (լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, անտառային գորշ, անտառային դարչնագույն, սևահող, շագանակագույն, կիսաանապատային գորշ, աղուտ-ալկալի) ցուցադրելու համար անհրաժեշտ են գլանաձև` 85 մմ (± 5 մմ) տրամագծով, 200 մմ բարձրությամբ, 3 մմ (± 1 մմ) հաստությամբ, փակ բերանով, թափանցիկ ամբողջական անոթներ (ապակուց կամ պլաստմասսայից)և դրանք պատի վրա տեղակայելու լաքապատ փայտյա ստենդ: Ստենդը պետք է ունենա կախիչներ և մետաղական (մոխրագույն) հենարան: Անոթների վրա պետք է հայերեն լեզվով գրված լինեն հողերի անվանումները: Անոթները պետք է լինեն ոչ գունավոր, որպեսզի հստակ արտահայտվի հողի գույնն ու կառուցվածքը: ՀՀ հողերի նմուշների հավաքածուն պետք է ամրացնել աշխարհագրության լաբորատորիայի պատին` աշակերտներին տեսանելի հատվածում:ՀՀ հողերի նմուշները (լեռնամարգագետնային, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մարգագետնատափաստանային, անտառային գորշ, անտառային դարչնագույն, սևահող, շագանակագույն, կիսաանապատային գորշ, աղուտ-ալկալի) ցուցադրելու համար անհրաժեշտ են գլանաձև՝ 85 մմ (± 5 մմ) տրամագծով, 200 մմ բարձրությամբ, 3 մմ (± 1 մմ) հաստությամբ, փակ բերանով, թափանցիկ ամբողջական անոթներ (ապակուց կամ պլաստմասսայից)և դրանք պատի վրա տեղակայելու լաքապատ փայտյա ստենդ: Ստենդը պետք է ունենա կախիչներ և մետաղական (մոխրագույն) հենարան: Անոթների վրա պետք է հայերեն լեզվով գրված լինեն հողերի անվանումները: Անոթները պետք է լինեն ոչ գունավոր, որպեսզի հստակ արտահայտվի հողի գույնն ու կառուցվածքը: ՀՀ հողերի նմուշների հավաքածուն պետք է ամրացնել աշխարհագրության լաբորատորիայի պատին՝ աշակերտներին տեսանելի հատվածում: |